

ԿՈ՞Ղ ԸՆԴԱՌԱՋ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Posted on August 18, 2014 by Keghart



Category: [Opinions](#)



Թանկագին հայրենակիցներ,

Համայն հայ ժողովուրդը Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի տարածքին կը գտնուի անպատիժ մնացած հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի սեմին: Հարիւրամեակէ մը ի վեր, ամէն հայ իր սիրտին խորը զգացեր է անջնջելի վիշտն ու ցաւը իր ժողովուրդին կրած հողային, մարդկային ու մշակութային անհաշուելի կորուստին: Ոչ մէկ հայ ընտանիքի ինսայուած է այդ ահաւոր ճակատագիրը:



Ձեզի ծանօթ է Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի Գանատայի Յանձնախումբին զեկոյցը: Այնտեղ յիշուած են շարք մը ձեռնարկներ քաղաքական, մշակութային, պատմական, դաստիարակչական, հրատարակչական եւ երիտասարդական բովանդակութեամբ: Իւրաքանչիւր հայագաղութ իր սեփական միջոցներով ու մարդուժով, մշակութային թէ տնտեսական անկախ միջոցներու ներդրումներով պիտի իրագործէ 100-ամեակի նախաձրագրեալ իր հանդիսութիւնները: Թորոնթոյի եւ Մոնրեալի յանձնախումբերը կը ներկայացնեն Գանատայի հայկական գաղութը, որ իր հերթին մաս կը կազմէ Երեւանի մէջ կազմուած Հայոց Ցեղասպանութեան Կեդրոնական Յանձնախումբին:

Թանկագին հայրենակիցներ,

Համայն հայ ժողովուրդը Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի տարածքին կը գտնուի անպատիժ մնացած հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի սեմին: Հարիւրամեակէ մը ի վեր, ամէն հայ իր սիրտին խորը զգացեր է անջնջելի վիշտն ու ցաւը իր ժողովուրդին կրած հողային, մարդկային ու մշակութային անհաշուելի կորուստին: Ոչ մէկ հայ ընտանիքի ինսայուած է այդ ահաւոր ճակատագիրը:



Ձեզի ծանօթ է Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի Գանատայի Յանձնախումբին զեկոյցը: Այնտեղ յիշուած են շարք մը ձեռնարկներ քաղաքական, մշակութային, պատմական, դաստիարակչական, հրատարակչական եւ երիտասարդական բովանդակութեամբ: Իւրաքանչիւր հայագաղութ իր սեփական միջոցներով ու մարդուժով, մշակութային թէ տնտեսական անկախ միջոցներու ներդրումներով պիտի իրագործէ 100-ամեակի նախաձրագրեալ իր հանդիսութիւնները: Թորոնթոյի եւ Մոնրեալի յանձնախումբերը կը ներկայացնեն Գանատայի հայկական գաղութը, որ իր հերթին մաս կը կազմէ Երեւանի մէջ կազմուած Հայոց Ցեղասպանութեան Կեդրոնական Յանձնախումբին:

Տնտեսական Յանձնախումբս պարտք կը զգայ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԵՒ ԻՐԱԳՈՐԾԵԼ 100-ամեակի ծիրէն ներս կատարուելիք հանգանակութիւնը, որուն հասոյթով պիտի հաւասարակշռուին մեծագումար ծախսերը Յանձնախումբին ստանձնած պարտաւորութիւններուն յառաջիկայ 18 ամիսներու ընթացքին:

Այսու բացուած կը յայտարարենք 100-ամեակի Հանգանակութիւնը: Սրտագին կոչ կ'ուղղենք ամբողջ գանատահայութեան, անխտիր ԼԻԱՍԻՐՏ մասնակցելու սոյն հանգանակութեան, որպէսզի միասնաբար լաւագոյնս կատարենք մեր ազգային արժանապատուութիւնը խորհրդանշող անյետաձգելի այս պարտականութիւնը: Աւարտին, Յանձնախումբս, ԳԻՏԱԿԻՑ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆ-ՆԱՏՈՒՈՒԹԵԱՄԲ հանրութեան պիտի ներկայացնէ իր նիւթական գործունեութեան հաշուեկշիռն ու ցանկը նուիրատուներուն՝ ստացուած գումարներու:

Ի դիմաց

ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՅԱՆՁՆԱՌՈՒՄԲ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ

Ա. Չատըրճեան
Գանձապահ

Մ. Գարագաշեան
Ատենապետ

14/8/2014

